



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ ՈՐՈՇՈՒՄ

«18» հուլիսի 2019 թվական N: 326-Վ քաղաք Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԵՐԹԱՎԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2018 թվականի հուլիսի 17-ի թիվ 26-Ա որոշման 1-ին կետը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավան համայնքի ավագանու անդամների հերթական ընտրությունները նշանակել 2019 թվականի սեպտեմբերի 29-ին:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչություն, Հայաստանի Հանրապետության թիվ 33 տարածքային ընտրական հանձնաժողով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անուշավանի համայնքապետարան:



Իսկականի հետ ճիշտ է

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ